



ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 35

✻ ՇԱՐԱԹ ✻

26 ԱՊՐԷԼ 1908

ԱՊՐԱՅԻՆԱԿ ԵՄԻՆՈՂՇՈՒՄ

ԶԵՆԻԹ

ԱՊՐԱՅԻՆԱԿ ԵՄԻՆՈՂՇՈՒՄ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻԶ

Գ. ՍԱՐԳԻՍՈՑ ԵՒ ԸՆԿ.


Պաշտոն-Գարու, Օռոգլախ-Պաք հաստատութեան դէմ, թիւ 16

Հատոր 40 փաթա

(آ. آصادوریان) شرکت سرنیه مطبعه سی — باب عالی جاده سنده نومبر ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

4. Պոլիս, Պապը-Այի հաստատութիւն 52



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
էլիանգումայն մեքենաներ
էկը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաւակի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅՐԱՅԻՆ ԿԱՅԺ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կտորի լազործուածը, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐԺԱՅԻՆ
ՄԱՍՆԱՎԱՅՈՐԴՈՒՄՆԵՐ

- | | |
|---------|---|
| ԸՆԴՐԱ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿՍԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը . |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիթա, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԵՐԻՏԱՐ | Չարչը Պօյու, թիւ 120 . |

Կասաբեայ երախաւորութիւն

Մասնահիշեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւզօղլուի տունը:



ՐԵԻԵԼՔ ՕՐԱ-

ԹԵՐԹ ազգային, գրական եւ ֆաղափական :
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան 4. Պոլսոյ համար 80 դր. վեցամսեայ 45 դր. գաւառներու համար տարեկան 108 դր. վեցամսեայ 60 դր. և օտար երկիրներու համար տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Ձեռքէ վաճառում՝ քաւք փաւք: **ՐԵԻԵԼՔ** հրա լարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խընաւեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵԻԵԼՔ, իր վերակազմուած խրմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներ

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ:

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԸՂԱՂՈՒ հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Ծանօթ Դէմքեր և Երբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բացի գրական, բանասիրական գրուածքներէ, որոնք տեսութիւններէ եւայլն:

ԱՐԵԻԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն ու բաժանորդագիրն շտապէ և ուղղել Տէր և Տնօրէն Գարեգին էֆ. Պօյաճեանի հասցէին, Ղալաթիա, Մահմուտիէ Ճափտէօի, ուր հաստատուած են թերթին ապարանն ու խրմբագրատունը:



ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 35

ՇԱՐԱԹ

26 ԱՊՐԻԼ 1908

ԱՆԻՈՋԵՄ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Արձագանգին

- | | |
|--|-----------|
| — Սիրե՛ս սեսնել թարմ կուսական
դէմքն հայուհեաց նորադողոջ . . . : | — . «Ո՛չ» |
| — Ի՛նչ, անոնց մէջ մի՞նչ չիկան
անկեղծ սիրտեր սիրադողոջ . . . : | — . «Ո՛չ» |
| — Զի՞ մըսներ մէջն անոնց ունկան
քարոզչին խրատն յեկեղեցւոջ . . . : | — . «Ո՛չ» |
| — Եւ չե՞ն լըսեր՝ պաղասական
որբին լացն ու աղբասին կոչ . . . : | — . «Ո՛չ» |
| — Ա՛հ, գէթ գիտե՛ն փակել բերան
կամ խօսիլ ի վայել տեղւոջ . . . : | — . «Ո՛չ» |
| — Հոգւով ալ բարձր, ազնւական
չե՛ն մեր իկնայք հարուստ ու ջոջ . . . : | — . «Ո՛չ» |
| — Հընազանդ ե՛ն իրենց էրկան
իբրեւ իրենց միակ թիրոջ . . . : | — . «Ո՛չ» |
| — Յարգ կ'ընծայե՞ն խոր, իրական,
իրենց աւագ ալ ու ներոջ . . . : | — . «Ո՛չ» |
| — Հապա զորով, սէր տեսական
չիկա՞յ ընդ մէջ հարս ու կեսրոջ . . . : | — . «Ո՛չ» |
| — Մարդը, լուրջ, ծանր ու խոհական
պէ՞՞ք է անսայ խօսքին կընոջ . . . : | — . «Ո՛չ» |
| — Պատասխաններդ ե՛ն միտական .
զանոնք կրկնե՛մ ես մեծագոյ . . . : | — . «Ո՛չ» |
| — Կանանց ձեռքէն, ո՛րքան որ, կան,
ալ չե՛մ կրնար փրկել իմ պոչ . . . : | — . «Ո՛չ» |

(Այգեկութ)

Ս.Լ.ՓԱՍԼԱՆ

ՔԻԹԻՔԻՈՍՆԵՐԸ

Չեմ գիտեր թէ ինձմէ զատ գտնուած են ուրիշներ ալ որ այդ անունով մկրտած ըլլան քիփը այն մարդոց՝ որ ... որ ... — Ինչպէս ըսեմ — որ ... պարզապէս ... Քիթիթիթներ են, նա՛ :

Աշխարհիս ստեղծումէն մինչեւ Դատաստանի վերջին օրը գտնուած են և պիտի գտնուին Քիթիթիթներ, յաղագս ամենամեծ փառացն Աստուծոյ և մարդկութիւն ըսուած անշահ բանին մէկ motifը, մէկ գրասանգը ըլլալու համար կարծես: Քիթիթիթսը այն է համայնքի մը համար ինչ որ է փուշը՝ վարդին: Վարժարաններու մէջ աշակերտներ կան որ հինգ տարի շարունակ մի եւ նոյն դասաբանին մէջ կը փոփոխուին, քաջ մը առաջ չեն երթար: Մարդկութեան մեծ դպրոցին մէջ Քիթիթիթները այս վերջիններուն դասընկերներն են: Մարդս Քիթիթիթս չըլլար, Քիթիթիթս կը ծնի:

Ասիկայ սեռ, տարիք չունի:

Քառսուն տարու ծեր Քիթիթիթներ կան, Քիթիթիթս կրնան ըլլալ երիտասարդ տղամարդիկ, նոյն իսկ Քիթիթիթներ կան քսան տարու աղջիկներու մէջ: Զարգացումի, յառաջդիմութեան, շարժումի դէմ պատուաստ եղած են ասոնք և բան մը չի կայ որ կարող ըլլայ փոխել տալ իրենց նկարագիր մը որուն Աստուած ... պէլան տայ: Քիթիթիթսը թիփ մըն է որ ընկերութեան սանդուղին ամեն աստիճաններու վրայ ալ յանդարձ դիմացդ կանգնած կը գտնես: Քիթիթիթս վաճառականներ կան, սեղանաւորներ, տիրացուներ, լրագրագետներ, գրագէտներ, քահանաներ, վարժուհիներ, դերասաններ, եւայլն: Գիտցածնունմէն, տեսածնունմէն, զգացածնունմէն բան մը չեն փոխեր, նոյն իսկ երկրորդ ջըրհեղելի մը պարագային և կեանքի մէջ այնպէս կընթանան՝ ինչպէս ուղտերը անապատէ մը կանցնին, ծանր, դանդաղ քայլերով, և վեր վեր բռնած գլուխնին, դիմացինին կարծել տալու համար թէ մէջը բան մը կայ: Քիթիթիթսը գիշերը կանուխ կը պառկի, և առտուն կանուխ կարթննայ ամեն ինքզինքը

յարգող անասունի պէս: Օդին՝ սաննի ունեցած ատենը կը խմէ և քօնեաքը՝ երբ անեքձագը կը կարգուի:

Տեսակ մը պարկեշտութիւն ունի որ ... գլխուն բան մը իջեցնելու կուգայ: Կիններուն ծուռ չի նայիր, աղջիկներուն ձեռքը չի սեղմեր, վրան բաց բան չի կարգար, մերկ կիներու պատկեր չի նայիր, բայց օրը անպատճառ երկու ժամ կը մտածէ թէ արդեօք ճար չի կա՞յ որ կնիկներուն բաղնիքին պատը ծակ մը ունենար սէ, պազի պազի ներս նայէր: Քիթիթիթսին գլուխը կտրես, սեւ գուլպայ չես կրնար հագցնել իրեն: Հօրմէն ճերմակ տեսած է, ճերմակ պիտի ըլլայ և իր այդ քիթիթիթսութիւնը չքմեղացնելու համար կը պնդէ թէ ճերմակ գուլպաները ետսեմիի կը նմանին:

Խեղճ յամիկ ... վարդը կնկան մը այտերուն կը նմանցնեն և զքեզ՝ ... Քիթիթիթսի գուլպաներու: C'est dégoûtant:

Այնքան ոսկի ունենալ կուզէի՝ որքան Քիթիթիթսը խաչ կը հանէ: Բարեպաշտ է, Աստուածավախ՝ Քիթիթիթսը, բայց անգամ մը որ թաղական կըլլայ, կարծես թէ քապախներուն մէջ մարախ կիյնայ:

Քիթիթիթսը զօրաւոր դիւանագէտ է: Բիւզանդիոնին «Ինչ կանցնի կը դառնայ» իր աւետարանն է, կը քննադատէ, պատգամներ կը թքէ, ուրիշներու խրատներ կուտայ, հեռագիրներուն չի հաւատար և ասանկ իրմէ վեր բաներու խառնուած ատենը, քիթին ծայրը չի տեսնար և խապար չունի որ ինքը Բիւզանդիոնին մէջ թաղուած ատենը, կնիկը հիյօ պիյօ կընէ կոր դիմացի կտրիճին հետ:

Քիթիթիթսը եթէ Երուսաղէմ չերթայ կը մեռնի: Իրեն էն մեծ հաճոյքն է, և պատիւ կը համարի, դիմացը ելլողին ցուցունել թեւին հաճիները, Գլխադիր մը՝ 1850 թուականը ճիշդ տակը: Կան այնպիսիներ ալ որ իրենց քիթիթիթսութիւնը մինչեւ Նափա չեն կրցած տանիլ և բաւականացած են թէքիթտաղցի Ս. Կարապետեկեղծ հաճիով: Ասոնք՝ simili Քիթիթիթսներ են: Անոնց համար մարդ հաւնիլը մեղք է: Կեանքին մէջ մարդու մը վրայ գովեստով չէ խօսած: Տեղեկութիւն ուղէ մէկու մը վրայ և մարդս կսկսի:

— Կէշ մարդ չէ կիտցածս, գործին մու-

խայթէ, հալը վախժը տեղն է կըսեն կոր,
կենե դուն գիտես ամա:

Այդ «կենե դուն գիտես»ը չի կա՞յ, ամ-
բողջ մաքրավելիդ է, մարդուն խէրը կա-
նիծէ: Եթէ «դուն գիտես»ը չաւելցնէ՝ կը
սատկի Բիթրիոսը: Նախանձոտ կըլլայ Բի-
թրիոսը, չահախնդիր, բանասարկու, վայրա-
հաջ և առաջին անգամ մօրուքին մէջ ճեր-
մակ թել մը տեսնելուն պէս, պօետի կսկսի:
Դիտեցէ՛ք, որքան Բիթրիոսներ որ կը ճանչ-
նաք, ամենուն ալ կիները հաստ ունեք կու-
նենան, աղջիկնուն մէկ հատին անունը ան-
պատճառ Սաթենիկ կըլլայ և սպասուհի մը
կունենայ որուն չես գիտեր ինչո՞ւ աչքին
մէկ հատը աւրուած է:

Եթէ Բիթրիոսին վարտիքը խասայէ չը-
լայ և բաշայէն չի կապուի, կեանքէ համ
չառներ և հանգիստ չունի: Շապիկին օձիքը
պառկած կըլլայ և խանութին չրախին անու-
նը ... Արթուն:

Կեանքին մէջ գոնէ երկու անգամ սար-
լըխ եղած է, և մէկ անգամ թատրոն գա-
ցած Բիթրիոսը: Մեռնիլը գիտնայ, նորէն
չաբաթ օրէն զատ ուրիշ օր մը չածիլուիր:
Եւ չեմ գիտեր ինչպէս կընեն, ամեն Բիթի-
րիոսները չաբաթ իրիկունները կը մեռնին:
Ինքզինքը ճանչցող ծաղիկ մը անոր գերեզ-
մանին վրայ չի բուսնիր:

Ե. ԱԼՓԻԱՐ

ԻՆՉՊԵՍ ԾՆԱՅ ԵՍ

ՍՏԵՓԱՆ ԽԱՉՈՒՆԻԻՆ
(մտերմօրէն)

Ու մեսաղի զոյգ մը փայլուն
Ժանիկներուն մէջ գլխիվայր,
Ի լոյս բերին դեմով ըզմայլուն,
Ձեռներու տակ փորձ փրկարար ...:

Ընդա՛յ, ընդա՛յ, ընդա՛յ, ընդա՛յ
Անհասնում հիշ սուր անխընայ,
Հեռու ճամբէ ահա՛ ինկայ
Կարծես ընդայի մեքենայ ...:

Մա՛նչ է մա՛նչ է, աչուրնիդ լոյս,
Գոչեց դայեակը ցնծագին
Ու ձեռներուն մէջ ջրասոյզ
Չորս դիս զնեց գոհ խնդագին ...:

Նշողբակի հըպում սրկար,
Միակ անպէտ մասը մարմնին
Կսրեց առաւ պորտիս երկար,
Պահելու զայն ժամուն պատին ...:

Անմիջապէս ջուրով լեցուն
Կոնք մը բերին, քիչ մ'ալ օճառ,
Լոգանով մը զաղջ ու փրփրուն
Մաքրեցին դիս շուտ վերէն վար ...:

Բայց աղ պէտք էր, աղ սպիտակ
Որով օծէր ձեպէր հարսար,
Շատ մը տեղեր ... քեւերուս տակ,
Որմէ բնա՛ւ տան մէջ չիկար ...:

Այիւր չ'ըլլա՛ր արդեօք մա՛մի,
Հարցուց աղջիկ մը անդիէն,
Մինչ ան՝ շեշտով մը հնամի՛
Չէ՛ չէ՛ կ'ըսէր խիստ, յիշօրէն ...:

Դրացիներ՝ ծոյլ ապիկար,
Դուք գուք չ'ունի՛ք կը գոչէր ան
Յետոյ զոյգէն աղել չ'ըլլար,
Մնայ անհամ միտ յաւիտեան ...:

* * *

Երբ տեսնեմ անհամ անհամակրելի
Հոգիներ բացիկ անյի պաղ-զաւակ,
Գիտեմ, այդ աղէն անխուսափելի
Ձուրկ է մնացած իրենց մարմինն խակ ...:

ԿՈՊԷՌ ԷԷԳԻՍԵԱՆ



Ն Ե Ր Շ Ն Ձ ՈՒ Մ Ն Ե Ր

Անցած շաբթու Դնալը կղզին էի՝ Ձառկի այցելութիւններէն փախչելու համար !
 Բայց մի՛ կարծէք որ պարապ կեցայ հոն ,
 Տարօրինակ բան մը պատահեցաւ ինծի այդ տեղ ,
 Ես որ երբէք ոտնաւոր չեմ գրած եւ ամենեւին տաղաչափութեամբ չեմ հասկցուցած զգացումներս ,
 մէկէն ի մէկ խօլ պէտքը զգացի յանգով եւ ոտքով խօսելու , եւ սկսայ քերթել
 Կղզին զիս բանաստեղծ ըրաւ , զիս որ գեղարարէ արարած մըն էի լոկ , դեռ տանընդիմ օր առաջ :
 Աստուածներու լեզուն խօսեցայ հոն
 Վստահ եմ որ եթէ շաբաթ մըն ալ շարունակէի մնալ , Պարսամեան , Մեծարենց , Թաթուլ եւ *tutti quanti*
գերօ պիտի մնային իմ քով :
 Բայց , մեղքցայ անոնց վիճակին եւ շատեցի Բերա իջնել , բոլորովին չվերանալու համար :
 Սակայն կը փափաքիմ տաղաչափական տար փորձերս ծնւած գնահատութեան ներկայացնել , հասկնա-
 լու համար թէ նայի՛նք իմ մէջս Վիգոր Հիւկօի կամ գոնէ Հրանդ Նազարեանի *etoffe*ր կա՛յ :
 Յետագայ զգայուն եւ փափուկ քերթումով ծնուած է անծի մը , համակրելի ծայր աստիճան եւ տար-
 րին՝ մինչեւ միւս աստիճան , որ արժանութիւնը տուաւ զինքը քաշքշելու , պայմանաւ որ կենդանագիտութեան
 տանձմանէն դուրս չելլեմ :
 Իսկ երկրորդը պզտիկ ընկալած մըն է , որ խորհիլ պիտի տայ ընկերոջներու թէ՛ փոխանակ վրայ փարա-
 տալու , վրայ փարա տաւած եմ նստած պանդոկէս , բան մը՝ զոր չեմ վայելցնէր իմ ազնուականութեանս :

I

ՊԱՐՈՆ ԳՐԵԳՈՐԸ

Հուժկու եւ հսկայ , անեղ , անաւոր
 Ձայնիկ մը ունի մեր պարոն Կորկոր ,
 Մի՛ էլլէք երբեք չը հաւնիք անոր . . .
 Գիրգորին ծանր խընա՛խ ե , խաչո՛ր :

Երգած միջոցին երկինքը կորկոր
 Կ'ընէ եւ խորհիք . — «Տէ՛ր , ի՛նչ կ'ըլլանք կոր» ,
 Միտերը ամէն ըլլան բիր կրտսր . . .
 Գիրգորին ծանր խընա՛խ ե , խաչո՛ր :

Երբ բանայ յանկարծ բերանը խոտոր ,
 Երբ քեւերը ընէ տիտակ եւ կամ կոր ,
 Մարդիկ կը մնան ա՛լ մտաւոր . . .
 Գիրգորին ծանր խընա՛խ ե , խաչո՛ր :

Գիտէ աշխարհիս երգերը բոլոր ,
 Ձկայ օքերա կամ օքերէք որ
 Ձրլան անոր միտ մտերիմ հանչուր . . .
 Գիրգորին ծանր խընա՛խ ե , խաչո՛ր :

Երգած աստեղը կ'ընէ քիչ մը գոռ ,
 Բռնելու համար ծօն նետաւոր
 Վախճամ կը քրէ տաս անգամ ի՛ր տոր . . .
 Գիրգորին ծանր խընա՛խ ե , խաչո՛ր :

Երգելու տաղանդ մ'ունի անտուր ,
 Երբ դեռ զսնուէր արգանդը ի՛ր մօր ,
 Կերգէր «Գառմէն»ին մէջ Թորեաւոր . . .
 Գիրգորին ծանր խընա՛խ ե , խաչո՛ր :

Էնցուն կամ պարապ երբ ըլլայ ի՛ր փոր ,
 Նորէն կ'երգէ ան հին բան մը կամ նոր ,
 Ու չի գիտէր քե . . . le silence est d'or ! . . .
 Գիրգորին ծանր խընա՛խ ե , խաչո՛ր :

Ձուկեկայ փարա , սիրտն է միտ անդոր ,
 Տեսա՛ւ մի դաւնակ անպոչ պոչաւոր ,
 Կը ձգէ ձայնը Ղալաբեա *skjor* . . .
 Գիրգորին ծանր խընա՛խ ե , խաչո՛ր :

Գրնայրի մէջ աղջիկներ աղուր ,
 Գիրգորին սիրոյն ա՛լ Աստուծուն օր
 Մեռնի՛ն , լմնա՛ն , լա՛ն արտաւարտ . . .
 Գիրգորին ծանր խընա՛խ ե , խաչո՛ր :

Բայց ան անտարբեր , միտ անկարեւոր
 Աչքով մը նայի անոր ու ասոր ,
 Ձօնուած արուեստին մեղրանոր . . .
 Գիրգորին ծանր խընա՛խ ե , խաչո՛ր :

Ձայն մը ունի ան ցնուլ մեղրամոր ,
 Երբ գեղգեղէ , երկինք , լեռ ու ձոր
 Ապուլ կը կրթին . . . մա՛ր քառօր *s'ollo'n* . . .
 Գիրգորին ծանր խընա՛խ ե , խաչո՛ր :

Գրաւելու զայն կիներն են անգոր,
Միւզիքն անցած է սեղն իր հօր ու մօր,
Կնիկն ալ ըսե՛ք՝ նօթաներն են կլոր ...
Գիրգորին ծանր խընա՛խ է, խաշո՛ր :

Բայց սիրացու չե՛ք մեր պարոն Գիրգոր
Այլ պաս, պարիդոն, սօքրանօ, քէնօն,
Ու երգէ յաւե՛ս Մասգօթ, Թրօվաթօն ...
Գիրգորին ծանր խընա՛խ է, խաշո՛ր :

Երբ քննադատե՛ք զինք, ըսէ պի՛ս՝ որ . —
« Պարոն Գառուզօն ի՛նչքա կ'արծէ որ ,
Ես այդ պարոնին դաս կուտամ encore ! ...
Գիրգորին ծանր խընա՛խ է, խաշո՛ր :

Շէն շող մանչ մըն է մինչեւ իսկ այսօր,
Ըլլայ ... սեւ եւ կամ հերմակ պեխաւոր,
Ամենք սիրեն զայն ու ... ձայնն աղւոր ...
Գիրգորին ծանր խընա՛խ է, խաշո՛ր :

II

ՕՐԷԼ ԵՍԷՍ.Պ

(Քեզլամ)

Աւագ շաբաթը Յիսուսի Զատիկին,
Յամի տեառն ինք հարիւր եւ ուրի՛ն, —
« Մե՛յմը երբամ Գրնալը կղզին »
Ըսի եւ նստայ Պ. Բասն քիւին :

Բը՛թ, բը՛թ, բը՛թ ... վերջապէս հասանք,
Մինչ կարծէի քէ նաւթան կը մնանք,
« Պանդոկ մը կ'ուզեմ, ո՛չ ածան, ո՛չ քանգ »
Խորհեցայ, որպէս զի չը մնամ ... տնանկ :

Օրէլ Պելլին եւ օրէլ Բրօթի,
Աչե՛ր ուղղէին ինծի ... զօգօթի,
Հրաւիրելով զիս որ ուղղէի
Բայլերս դէպի իրենց տեւակի :

Բայց յանկարծ տեսայ Շահապի պանդոկ,
Որ խորխորէն բարձրանայ անհոգ,
Աղւոր, գրաւիչ, սիրուն ... անմարմոք,
Ասպարեզ կարդար ամենուն՝ շող մոգ :

* * *

« Ե՛ս եմ այս տեղի Սբլանիսն — ըսէր —
« Ի՛մ մէջս կայ լուբեա, ինչպէս տանն եւ սեր
« Ըսպաննախ, հաւկիթ եւ ... շի՛ք ծառաներ,
« Հոս բնակողը հի՛շ չըլլար ... զանսէր :

« Սենեակներս՝ մաքուր, չի՛ք մուկ — մըծեղ, —
« Հոս նստելու է ... Սրբազան Մուշեղ, —
« Մամբեանն անգամ կեանքին մէջ մի հեղ
« Պանուեց սաւաններս, իմ կարագս ու ... եղ :

« Տերս մարդ մըն է տա՛ք եւ ... չե՛ք հօ՛հի,
« Տնի աշխատի նրման ... չե՛ք հօ՛հի,
« Տիրունիս ըսէ՛ք կին մըն է ճի՛ճի
« Ո՛ր աչք կը գոցէ լաներու հիշի :

« Կերակուրներս միտք քամ ու համով,
« Կաթն է անարատ, քէն չունիմ ... կով,
« Հոս բրնակողը կը կլլէ պօլ հով,
« Եւ ասկէ մեկնի շա՛տ անգամ լալով :

« Բոլոր ջոջ մարդիկ միտք հոս է որ գան,
« Թէն տես չըլլայ երբեք քաղաքան,
« Բայց կերելի քէ ամիրայական
« Ինչ մը ունի վրան, որուն հիանան :

« Եկա՛յք առ իս . — ա՛յսչափ միայն կ'ըսեմ,
« Պերպերեանն անգամ, քերթո՛ղ այն վտեմ,
« Եւ Փանոսեանը, պու՛սն երկնադէ՛մ
« Հո՛ս բնակած են . — ես մե՛նծ պանդոկ եմ :

* * *

Անտ'ւես, անկասկած եւ անսարակո՛յս,
Զկրցայ դիմադրել այս խօսեւուն ... կոյս,
Զորս ուղղէր ինծի պանդոկը Շահապ,
Ինծի՛ որ չեմ կլլեր ո՛չ լօյս, ո՛չ հապ :
Անսացի իրեն եւ մընացի հոն —
Երբ որ վարդերն էին դեռ կոկո՛ն —
Եւ հաւատացե՛ք, կ'ըսեմ նմարիս,
Շահապի պանդոկն է մի ... մարգարիս :
Պարոն Շահապը մարդ մըն է անուշ,
Իր լեզուին ծայրը չըկայ քոյն կամ փուշ,
Աչերը պնդուն, ո՛չ շիլ, ո՛չ ալ ... louche,
Բերանը վարդ մ'է . քիթիկը մի նուշ,
Մեկ զուկին անունն ալ է վարդանուշ :
Պանդոկ Շահապը է մի սիրուն տեղ,
Շենքը՝ բարեճեւ, իսկ կրիման՝ դեղ,
Դոնսէր եւ միւզիք, ամեն ինչ հոն կայ,
Դարմեն, Բալեաչի, Մասգօթ, քալալա՛ ... :

Երբ երբամ Բրօթի, հո՛ն գացե՛ք շիտակ ...
Դօմիսիօն չունի՛մ, հա՛ վստահ ըլլա՛մ :

ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ

Ք Ր Ո Ն Ի Կ

Նիւթեր կան, որոնց վրայ եթէ ուզես՝ կրնաս տարին տամներկու ամիս յօդուած գրել, օրինակի համար. Դատաստանական խորհուրդին որոշումները, մեր վարժարաններուն ներքին վիճակը, վարժապետներուն կեանքը և... եկեղեցւոյ պնակները:

Չեմ կարծեր որ ընթերցողներուս մէջէն գտնուի մէկը որ դժգոհ չ'ըլլայ պնակներէն:

Ամէն տօնական օրերու խնդրոյ առարկայ կըլլան սա՛ պնակները, թերթերը անդադար կը գրեն, ժողովուրդը յօժարակամ կը խոստանայ տալ իրեն վիճակած գումարը, և սակայն թաղական խորհուրդներէն ոմանք ինքզինքնին տակաւին այնչափ կարող չ'են զգար այս գործը գլուխ հանելու:

Ծաղկազարդի առաւօտուն եկեղեցի գացած էի: Թաղին համակրելի Սրբազանը իրեն յատուկ սիրուն ռոնով մը օրուան տօնին առթիւ քարոզը աւարտելու վրայ էր՝ որուն վերջաւորութեանը ծանուցում մ'ալ ըրաւ:

Եթէ ստիպողական գործ մը չ'ունիք ըսեմ:

Որպէս զի՝ ըսաւ, եկեղեցւոյ կարգ կանոնը յարգուի ու անպատեհութիւններ տեղի չունենան, թաղական խորհուրդը որոշած է պահարանները ու դասը՝ բացի դպրոցականներէ, ոչ ոք ընդունիլ, ինչու որ պղտիկները իրենց վարմունքով մեզի շատ նեղութիւն կը պատճառեն, մինչդեռ մեծերը՝ թէ մեզի և թէ միանգամայն զԱստուած կը բարկացնեն:

Ըստ իս՝ շատ իրաւացի ու արդար է այս դիտողութիւնը, որովհետեւ մենք եկեղեցի կերթանք՝ կամ հագուստնիս ցուցադրելու, կամ վերջին նորաձեւութիւնը ուսումնասիրելու, և կամ... որսորդութեան:

Պահարանները ու դասերը ամենէն յարմար վայրերն են այս վերջին յիշածիս հետեւողներուն:

Սակայն թաղական խորհուրդին այս տեսակ կարգադրութիւն մը ընելը այն ատեն գտնուի կըլլայ, երբ ամէն բան իրարու յարմար է: Կ'արծեմ ներելի չ'է պահարանները ու դասերը դօցելէ յետոյ՝ եկեղեցւոյ ատենան ալ երկու սեռի պատկանողներուն յատկացընելը: Անդին չէ քիչ մը ասդին եղբր է ինչ կարեւորութիւն ունի, չէ մի որ նորէն vis à vis նն:

Ըստ իս՝ անիրաւութիւն ալ է մեր տեղւոյն կէսը գրաւելէ յետոյ վերնատան մէկ մասը մեզի տրամադրելի չ'ընելը:

Կ'ըսուի թէ ժամանակին քարոզչին մէկը արգիլեր է կանանց նոյն իսկ մեծ խորանէն հաղորդութիւն առնելը: Մինչդեռ հիմա...

Կարեւոր կէտ մը կայ՝ որուն ուշադրութիւն պէտք է ընեն թաղական աղաները:

Առաջ, ամուսնացած, զաւակներու տէր ու ջիղերնին թուլցած մարդիկը պնակ կը պտըտցնէին, մինչդեռ հիմա ասոր բոլորովին հակառակը, քսանէն քսանը հինգ տարեկան նորաբոյս պիւնրով երիտասարդներ, որոնք կնկան մը թեւին և կամ օրիորդի մը սրունքներուն քսուելու համար օրը երեք անգամ բօսալի կ'ելեն կոր:

Եթէ մի միայն էրիկ մարդոց բաժինը պիտի պտըտիք ըսուէր, այն ատեն՝ վստահ եղէք որ ո՛չ ոք պիտի յօժարէր:

Արդեօք կարելի չ'է պնակները վերցնել ու ամէն մտնողէն մէյ մէկ մուտք առնել մարդուն համեմատ, այսինքն 11 ղըշ հարուստէն իսկ 5՝ ղըշ էսնաֆէն, և չեմ կարծեր որ չի յաջողին:

Սկիւտարցի հարուստ ու մի եւ նոյն ժամանակ լուրջ անձնաւորութիւն մը տեսէք ինչ տեսակ առաջարկութիւն մը կ'ընէ:

Սկիւտար կ'ըսէ, 1800ի չափ տուն կայ, ասոնցմէ 800ը թող բան մը չի վճարեն, մընացորդ տուններուն 100ը տարեկան երեքական ոսկի, 100ը երկերկու ոսկի, իսկ 800ը մէկ մէկ ոսկի, ինքն ալ կը խոստանայ տալ ինչ ՏԱՍԸ ոսկի վճարել, և վստահ եմ թէ աւելի իսկ կուտայ՝ եթէ այս կարեւոր գործին ձեռնարկեն:

Թաղական աղաներուն մէկ մասը համաձայն է, իսկ մէկ երկուքը միայն կը հակառակին, ինչու որ տարին հազիւ թէ երկու անգամ եկեղեցի կը մտնեն ու վճարելիքնին բնականաբար մեծ բան մը չ'ըլլար, մինչդեռ եթէ տարեկան գումար մը որոշուի՝ այն ատեն ձեռքերը գրպանին խօթելու պիտի պարտաւորուին:

Կարծեմ ժամանակը եկած է այլեւս եկեղեցական այս կարգադրութիւնը ընելու:

Եւ եթէ երբեք ո՛չ մէկը գործերնուն գայ և ո՛չ միւսը, այն ատեն ուրիշ առաջարկութիւն մը ընեմ, թող էրիկ մարդոց բաժինը կիները պտըտին, իսկ կանանց կողմը՝ էրիկ մարդիկ, այն ատեն պիտի տեսնեն հասոյթները որչափ պիտի արդիւնաւորուին:

— Համմէ:

ԷՆԺԷԱ

ՄԱԳՐԻ-ԳԻՒՂՑԻ ՕՐԻՈՐԴԸ

ԵՒ ԻՐ ԱՊՐԵՆԱԿԵՐՊԸ

Այնքան բազմազունակ են իր բարձրն ու ընկերային կեանքին աղաղան ու տարօրինակ երեւոյթները՝ որ անոնցմէ քանի մը հետաքրքրական դրուագներ միայն բաւական կ'ըլլան ընթերցանութեան հաճելի նիւթ ներկայելու Հանրագիտակի սրամիտ ընթերցողներուն, ու մասնաւորապէս Մագրի-գիւղցի ընթերցողուհիներուն, որոնք իրենց կեանքին գլխաւոր գծերուն պատկերացումը տեսնելով, գուցէ չափազանց սրտմտելու զօրաւոր պատճառներ ունենան:

Հակառակ գեղացի անունը իր ճակտին վրայ կրելուն, անիկա՝ բնաւ գեղական բարձրու յատուկ, պարզ ու անսեթեւեթ սովորոյթներովը չէ որ կը ներկայանայ մեզի՝ այլ ընդհակառակը՝ շատ գեղեցիկ հակապատկեր մը կը ներթէ իր նախանձելի կեանքովն ու գնահատելի բարեմասնութիւններու բացորոշ պերճութիւնովը:

Սակայն՝ ինչ փորձ որ ընենք զինքը լուրջ նկարագրով մը օժտուած տեսնելու դիտումով՝ երբէք չպիտի յաջողինք, քանի որ հակառակ լրջութիւն ու զարգացած միտք մը կեղծելու իր ջանադրութեան անհանդուրժելիօրէն կարեւոր թիւ մը կը ներկայացնէ տեղեւոր ու անուս աղջկանց դասակարգը, և հետեւաբար՝ իր կարգին գոհացուցիչ միջին թիւ մը չէ որ կ'երաշխաւորէ:

Այսպէս՝ իր մտաւորական մակարդակը հազուադէպ բացառութեամբ, անշուշտ աղօտ նշոյլ մը միայն կուտայ իր զարգացման աստիճանաչափին նկատմամբ, և ատոր համար է որ արդէն՝ բաղդատմամբ ուրիշ շատ մը թաղերու, ընթերցասիրութեան տեսակէտով շատ տխուր իրականութիւն մը կը ցցէ մեր առջեւ:

Միայն իր հագուելու ու պնտուելու իսկապէս կիրթ ու ազնիւ ճաշակը՝ զինքը ծափահարելի բարձրութեան մը, ու գնահատելի գեղեցկագիտական արժանիքի մը տէրը ըրած են, և իրօք ալ պէտք է անվարան խոստու-

վանիլ որ՝ անթերի նրբութեան մը դրոշմը ունի ան իր շուշանացած ճակտին վրայ:

Իր գլխարկը՝ ո՛չ անձա՛հ ու պոռոտ գոյներու ցուցադրութիւն մըն է, ո՛չ ալ անձարակ մօտիսդներու յատկանշական տգեղութիւնները կը կրէ, այլ՝ յղկուած ճաշակի մը առանձնայատուկ ամէն ներդաշնակութիւն ու դիւթանք կը ցոլացնէ:

Մագրի-գիւղցի օրիորդը՝ առտուն կանուխ ելլելու բարի սովորութիւնը ունի, որովհետեւ զինքը դարպասող պարոններու գո՛նէ անգամ մը երեւնալու հաճոյակատարութիւնը ծայրայեղ բաղձանք մը եղած է իրեն համար: Յետոյ՝ անմիջապէս մօրը խոհանոցի գործերուն կօգնէ, որ կը կատարէ առտուն... շատ կանուխ և գիշերը... շատ ուշ ատին:

Բայց ցաւով պէտք է ըսել՝ որ գրականապէս արգահատելի վիճակ մը կը պարզէ օրիորդը, ո՛չ ընթերցասիրութեան տենջ՝ և ո՛չ ալ հետաքրքիր ակնարկ մը լրագրութեան աղաղան ու օգտակար նորութիւններու հանդէպ: Ատոր համար է որ՝ արդէն գրականութեան մէջ երբէք դեր կամ մասնակցութիւն ունեցած չէ: Ինքը անոնցմէ դուրս՝ զինքը յատկանշող յատկութիւններ ունի: Եկեղեցասէր ըլլալու առաքինութիւնը, անուրանալի ճշմարտութիւն մը պարզապէս՝ որ կը բացորոշուի տօնական օրերու առթիւ մասնաւորապէս, երբ յոգնախուռն կը դիմեն եկեղեցի... մասնաւոր հրաւերով:

Զբօսական պտոյտներու հոգի կուտայ, թէպէտեւ ցարդ տուող մը եղած չէ, շաբթու մէջ ծովեզրը, օսմուգ-սամից, միսիր-քարլասից, ու վերջապէս համբաւաւոր Եհնի-մահալլէի կիւլլիւ պօսաւը, ուր տեղացի երիտասարդներն ալ կը փութան շատ մեծ անձկութեամբ:

Սիրահարութիւնը տեղացի օրիորդին համար սովորական ու իր ամէնէն հաճելի ժամանցը եղած է, շաբթու մէջ թղթակցութեամբ որ անիմաստ բառերու ալաւղակ շարադասում մըն է անխտիր:

Իսկ կիրակի օրերը աւելի յանդուգն ձեռնարկներու շուրջ կը դառնան իրենց սիրախաղերը, քանի մը ժամերու փախուստով՝ և կամ զբօսավայրերու մէջ սեղաններու առջեւէն՝ նայուածքներու խորհրդաւոր լեզուովը:

Ընդհանրապէս գեղեցիկ ըլլալու երջան-
կութիւնը կուտայ մեզի՝ խարտեաչները, մա-
նաւանդ՝ որոնք իրենց աչքերու հեշտավառ
քթթումներովը ամէնէն անզգայ սրտին մէջ
իսկ սիրելու ու սիրուելու փափաքը կար-
թընցնեն, ու անգամ մը որ բռնուիս անոնց
բոցեղ սիրոյն անվերիպելի կախարդումէն այլ
եւս ազատիլ դիւրին գործ չէ:

Բայց հակառակ ատոր՝ տակաւին նշանա-
կելի յաղթանակ մը չեն կրցած տանիլ՝ որ-
պէս զի արդար ծափերու երանութիւնը վա-
յելեն:

Ասոնցմէ դուրս՝ անողոք տկարութիւններ
ունի նկարագրի տեսակէտով, սկզբունք չունի
որ գործէ, իտէալ չունի որ մարմնացնէ, մը-
տացած լծի մը կեանքը պարզապէս իրենց
բովանդակ գործունէութիւնը:

Բայց սալօններու մէջ կարծէ զինքը տես-
նել՝ իրբեւ լաւ պարող, գերազանց առաւե-
լութիւններ ունի քան ուրիշ ո եւ է թաղե-
րու օրիորդները, առանց յոգնիլ գիտնալու,
անվհատ կը պարէ ամէն բան՝ թռչունի պէս
թեթեւ ու ոստոստուն:

Նուազ՝ գրեթէ ամէն տուն կայ՝ մանա-
ւանդ դաշնակ ու մանուօլին՝ այս վերջինը
պատէն կախուած կը մնայ ամիսներով:

Երեկոթի մը մէջ խնդրէ իրմէ որ հաճի
զգայացունց կտոր մը զարնել՝ նախ կը կար-
մըրի, յետոյ կը շառագունի, ու վերջապէս
ծնողացը՝ «Ելի՛ր զարկ նանքը» ներուն մէջ
մշուշուած, մաշիչ բոլբոս մը զարնել կը բա-
րեհաճի... բացարձակ անյաջողութեամբ:

Կ'ըսեն թէ Մագրի-գիւղցի օրիորդը թա-
տերասէր է, բայց չէ: Մնակեան կրնայ հաս-
տատել այս պարագան:

Կը կարծեմ որ՝ կամ կարծելու յաւակնու-
թիւնը ունիմ թէ՛ բաւական կոկիկ գաղա-
փար մը կազմել կրցի տալ, ամէն անոնց՝ ու-
րոնք կը հետաքրքրուէին Մագրի-գիւղցի օ-
րիորդը ճիշդ իր դիրքին ու կեանքին մէջ
ճանչնալ: Ուրեմն՝ ուրիշ առթիւ տեղացի
պարոններուն նկարագրութեամբը երեւիլ կը
խոստանամ, եթէ երբէք Հանրագիտակի սուղ
ու սիրուած էջերը լայն բանայ մեր առջեւ
համակրելի Լիլան (*):

ՍԵՂՈՒՆ ԳԱՓԱՋԵԱՆ

(*) Ինչո՞ւ չէ, ամենայն սիրով:

ՓՇՐԱՆՔՆԵՐ

Ինը հարիւր կին տեղ մը դիւր գոցէ 48ը
ժամ և անոնց մէջտեղը նստէ, ո՞ր կողմը որ
ականջ տաս՝ պիտի տեսնես որ միակ նիւթ
մը պիտի զբաղեցնէ զիրենք, այն է՝ քուր-
ջերու խօսքը:

* * *

Հարուստին մէկը իմանալով որ Բարիզ-
եան նկարիչ մը իր մօտը կը գտնուէր, զանի
կանչել տուաւ եւ հրամայեց որ բոլոր Եւրո-
պայի աղգերը նկարէ իրենց սովորական հա-
գուստներով: Նկարիչը այս խնդրանքը կա-
տարեց, և ֆրանսացին բոլորովին մերկ նկա-
րեց՝ թեւին վրայ կտոր մը կտաւով:

— Խելքդ ո՞ւր է, հարցուց անոր հարուս-
տը, ինչո՞ւ Ֆրանսացին մերկանդամ նկարե-
րես:

— Տէր իմ, պատասխանեց նկարիչը, մի
զարմանաք, ֆրանսացին այնքան ստէպ իր
հագուստին ձեւը կ'փոխէ, որ զինքը ի՞նչ հա-
գուստով նկարելս չգիտնալուս՝ ձեռքը կտոր
մը կտաւ տուի որպէս զի ուղածին պէս
հագուի:

* * *

Ընտիր գիրք մը և ընտիր կին մը՝ շատ
թերութիւններ կ'ուղղեն, գէշ գիրք մը և
գէշ կին մը շատ սրտեր կապակտնեն: Կան
մարդիկ որ այս երկու պարագաներու մէջ ալ
միայն կազմին կը նային, հետեւաբար իրա-
ւունք չունին գանգատելու (Պատ. Կրօնա-
կան Ժողովը իրենցմով զբաղեցնելու) երբ կը
աեանեն որ խաբուեր են:

ՅՈՎ. Հ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

ԿԱՐԵԻՈՐ

Ի գիտութիւն մեր արտասահմանի Պատ.
Բաժանորդաց, անգամ մ'ընդ միշտ կուգանք
յոյտարարել թէ, տարեկան բաժնեգիրները փո-
խանակ 12թ. 14 ֆր. ի բարձրացուցած ենք
ակամայ, նկատելով որ մէկ թերթը տասը
փարայի կը զրկուի բօսթայով և որ 13 զրչ.
կը բռնէ 52 թիւի համար:

Պ Ա Լ Ը Գ Լ Ը

... եւ մարմինը ամբողջ եցաւ
Պալլադի Ազգ. գերեզմանատունը.

140,000 անգամ կարգացած էք այս գլուխում քը օրաթերթերու մէջ, և թերեւս ձեր փափուկ սրտին խորէն՝ վախ, վախ, վախ մը ընելով անցած էք՝ իբր խղճի լոկ պարտականութիւն, և բնաւ չէք անդրադարձած թէ՝ տարին անգամ մը իր մասնաւոր օրին, ոչ թէ մեռել՝ այլ պարզ նէվազիլ մ'անգամ չունեցող երկսեռ բազմութիւն մը կերթայ մեռելը լալու, ոչ թէ վախ վախ վախով՝ այլ օխ օխ օխ ըսելով, ճնկելով, ուտելով և ցատկելով, (ասացէք միաբերան՝ մեղայ Աստուծոյ, Աստուած թողութիւն չնորոշեցէ. Ամէն) :

Երկրագունդիս վրայ կան տեղեր, ուր տեղացի ժողովուրդը իր մեռելը ծնծղանելով, խաղերով պարերով կը վերցնէ, կան տեղեր ալ՝ ուր մեռելին առջեւէն միւզիք մը կընթանայ, տեղեր ալ կան կըսեն ուր մեռելները կայրեն, մոխիր կը դարչնեն, և այդ մոխիրը, ածիւնը կը պահեն, բայց տեսէք որ մենք՝ քրիստոնեայնքս, թէեւ մեր մեռելներուն հետեւէն մազ փետտելու չափ ցաւ կսկիծ ցոյց կուտանք, բայց հողը դնելնէս վերջ տարին անգամ մը սովորութիւն ունինք ի յիշատակ մեռելոց երթալ մեր սիրելեաց հողակոյտերուն վրայ ... ճնկել՝ աղէկ տեղ, ուտել՝ ձեթով տոմար, և կոխել աւանդական հեղինակ մա կիւլտիւր, և որ աւելին է՝ ցատկաւոր, պարել, կոխտուել ոսկորոտիքը անոնց՝ որոնց ետեւէն ինչպէս ըսի՝ մազ փետթեցինք, արցունքի գետեր վազցուցինք, սեւ հագանք, չաթխըլը պոյաժա կապեցինք, և նոյն իսկ տարիներով չի՛կերանք այն բաները՝ զորս հանգուցեալը կը սիրէր ... :

Կազաչեմ, անմիջապէս բերանսիդ մի լաքէք հերքելու այս իրողութիւնը, կը խնդրեմ որ մեռելոցի երկուշաբթի մը Պալլադի գերեզմանատունը գտնուիք, և աչքով տեսնաք անցածն ու դարցածը, որուն մէկ պզտիկ մանրանկարը պիտի գծեմ հոս վարը :

Սըր Էնտրիւ Գարնէկի որչափ ունի արծաթ տոլար, Պալլադի գերեզմանատունը այնքան մեռել ըլլալով հանդերձ, դեռ տեղ ունի ... տահա տոլար :

Երեւակայեցէք ընդարձակ պարտեզ մը որմնափակ, ուր ծաղիկներու վարդերու տեղ մեռելները չարուած են, չատկերուն վրան խոշոր մարմարէ քարերով, որպէս զի սիրտերնին նեղացած ատեն չի կրնան դուրս ելլալ :

Ահա այդ քարերուն վրայ է որ արցունքի տեղ տեղ ըլլալի կը թափեն, ինչպէս նաեւ չըրող սալաթասիին եաղ քացախը :

Եւ դիտեցէք, ամէն տարի նոյն այդ Պալլադի օրը, երկինք ցաւելով մեր ըրած այդ անտեղի սովորութեան և արարքներուն՝ կուլայ, կ'անձրեւէ, ու դեռ չենք առնուիր, չենք ուղղուիր ... տահա սօղորուսու՝ չենք խափիր :

Առաւօտուն չառ կանուխէն չողեկաւքը անդադրում կը բանի, ահագին բազմութիւն մը կրելով Եփեսոսէն : Մեր մէջ դասակարգ մը կայ, որ նոյն այդ օրուան համար տարի մը ամբողջ դրամ կը ժողվէ, նոր ֆիստան, նոր գլխարկ կը չինէ, և եթէ քիչ մը տկար ալ ըլլայ, « պալլադիս ալ երթամ տէ անանկ եաթախ իյնամ » ըսելով՝ դուրս կ'իյնայ տունէն :

Կին, աղջիկ, տղայ, երիտասարդ, տառնց, և նոյն իսկ խունտախ պէպէքները օրօքոցէն կը հանեն ծիծերնին բերաննին կուտան և ճամբայ կ'իյնան, այնքան նշանաւոր օր մըն է Պալլադի բանայիրը այն դասակարգին համար՝ որոնք երկուշաբթի օրերը չալըսիւրիւրկէսիով տախտակ կը չփեն, ֆաթուռա միս կը հագնին, և բարկացած ատեննին է՛ն թեթեւ հայնոյութիւննին՝ պապայիդ ... ով կսկսի :

Սիրքէճի կայարանը լեցած է ալ՝ այն

կարգի ընտանիքներով, որոնք պատուհանէ պատուհան իրարու չամաչըրի սէլէ կուտան, և իրենց ամուսիններուն վրայօք կը գանգատին so մաժեռոն ձայնով մը, երեք օքսով բարձր:

Շոգեկառքին առաջին զանգակը զարնուած է արդէն, ելակի կողով ծախողներու պէս՝ մայրեր, հատ մը գիրկերնին, չորս հինգ հատ ալ բէշերնէն կախած՝ վակօն կը շտապեն, թող զաղջիկս, հասուկս, անցուկս ևլն:

— Հայտէ՛ ... ցապուգ, կը ձայնէ քօնտիւքթէօը:

— Պալըգլընըն խառապաֆօը պու մը տըր ... կը հարցնէ տիկին մը, ծիծը դուրս ձգած և որ գիրկի պզտիկը ի դուր բերանը կը պտըտցնէ գտնելու համար:

— Հայտէ՛ ... կերինիզ, սիմտի գաբայածայիմ ...

— Տուր պագալըմ Արիսողոմ աղա կէլէ՛ճէք, սէլէ, ճուրին խանաթան հէք ծոտա տըր...

— Քա տուտու, մենք մտնանք տէ ան ալ կուգայ հէլպէթ ... կըսէ օրիորդը սիվրիսինէկի կէրուկէն խալի դարձած դէմքովը:

— Նա՛, նա՛, կուգայ կոր, դուն սա բիճ խուռուսին առ վեր ել, ես ալ մտնամ տէ սէլէն տեղաւորցունենք ...

— Քա վո՛ւյ ... սանկ նայէ մայրի՛կ ... աօլմային եաղը դուրս է վաթէր ...

— Էյ հիմա խելքիս կուգայ, անտար ալ ըսի քի չիտակ պոնէ տէյի ...

— Նէ եաբայրմ քա ... չալուլ ըլան համալլըգ էտէճէք տէյիլի՛մ ա... չօգ չէյ... տէ ներս մտէք նայինք ... կըսէ Արիսողոմ աղան:

Նոյն ատեն երկրորդ զանգակը կը զարնուի:

— Քա Շահանդուռը ո՛ւր է ..., քա տուր, գաբամա միւսիւ, Շահանդուռ տըչարտա գալտը ... Արիսողոմ աղա, ո՛ւր ձգեցիր ...

— Նէ պիլէիմ քա, չօճօգ տէյիլ ա, ետեւէս կուգար կոր իշտէ ...

— Էյ վալլահ սիրտ, էյ հիմա՛, գուզում աօքթօն Շահանթուռըմ, օռթանճամ քա՛ ...

— Քա մայրիկ, աօքթօն չէ, քօնաօքթօն ըսէ ... կը յարէ օրիորդը, որ երեք ամիսի չափ մարապետներուն դպրոցը գացած էր:

— Էլիւշիւն քէօռին, տիրի տիրի օռթանճաւ դուրսը մնաց ... աճապ ես ելլամ երթա՛մ ետեւէն...

Ու երբ բոլոր ճամբորդները հեւ ի հեւ վազելով վակոն կը ցատկէին, թէլաչէն գըլխարկը ծուռ, սկառքինին հետ ֆօքքիւմ ֆօքքիէ, Շահանդուռ ըսուած օրիորդը ապուշ ապուշ վակոնները նայելով՝ կը հասնի, մէկ ձեռքովը ամէն մէկ քայլին ժառըթիէնը վեր քաշելով,

— Հոս ենք, Շահի՛կ, հոս եկուր ... կըսէ մայրը կէս մէջքէն վար կախուելով,

— Քա տուտո՛ւս, տուտո՛ւս ...

— Հայտէ՛ ... եասագ ... գալածագսին խօսք կառնէ ֆօնիւքթօը ...

— Քա գըզըմ տըր նէ՛ եասագ օլաճագ, եանըմատա ալըրմ, քօյնումատա ...

Եւ հազար դժուարութիւններով ներս կառնեն օրիորդը ու վայրաշարժը կը մեկնի:

— Հայտէ՛ նայինք, սա ըռախին չիչէն հանեցէք, կըսէ Արիսողոմ աղան ...

— Քա ճանը՛մ մէյմը մէզաուլլիս երթանք տէ, ողորմած հոգիին վրայ հայր մեր մը ըսենք, ետքէն խմէ ...

— Քա՛, ըռաղը տէտիլին հէմ սէֆա հէմ ճէֆա իլին տիր, խմիմ պիտի՛ քի կըսկի՛ժլէնմիշ ըլլամ ...

— Բաթլամիշ ըլլաս, նստողներէն կամընամ կոր ...

— Պէն պէլլի էթմէմ քա, իլաճ կիպի իլիվէրիլիմ ...

Տիկին Էպրոսին գիրկի տղան կապուտ հաւէն անդադրում կը հաղա, մինչ մօտը նըստըղ ուրիշ կին մը,

— Մախսըմը կապուտ հաղ է եղէր գիտնալըս ...

— Չիյտեմ ամա, խոռոպի պէս կը խօսի կոր ... ի՛նչ իլաճ ըրի նէ պիր միւմքիւն ֆայտան չի տեսայ ...

— Չօճօխին իլաճը ֆայտա չընէր քուրուկ, դուն բէհրիզ պոնելու ես ...

— Թամամ, կը ձգէ զահէր, իրիկունները մինչոկ իս դէմը չառնէ նէ, թէփսիլին կլոխը չաանիր, հէմ ալ թութու կծու մէզէններէն ծառքովը պողազս ի վար պիտի թխէ ...

— Հա՛, Աստուած սէր մուհապէթ տայ ամա մախսըմը մեղք է, չը նայիս բանճար-

լանմիշ կըլլայ կոր, հանի հեռու ըլլայ տա-
մար պիլէմ կը փրթի ...

— Աստուած տուաւ ան թող առնէ ի՞նչ
ընեմ, մեռնելու չե՞մ եւ, էրիկս ողջ ըլլայ,
հաց պերողը ան է, հիմա աս խառնչմը բի-
ճին համար խաթրէն դժուրս ելլամ ...

— Ատ վուրի՛շ ... ես քեզ մեղայ քու-
րուկ, անդին կը դառնայ, սոյն անսպասելի
պատասխանը իրեննհրուն պատմելու:

Տեղի անձկութեան պատճառաւ, չպիտի
ուզեմ նկարագրել, Արիսողոմ աղային չիչէն
տիպ ընելը, տօլման մէջէ ըրած ատեն յոյն
յղի կնոջ մը մէտէն ուզելը, Շահանդուռին
խօսք նետող երիտասարդի մը տիկին էպրո-
սէն կերած չախը, քօնտիւքթօր տոմսակը
ծակած ատեն տիկնոջ մատը ճղմելը, պըզ-
տիկ աղան չոգեկառքին պատուհանէն դուրս
բռնելով՝ պզտիկ գործ ընել տալերնին եւն.
և կը շարունակենք մեր նկարագրականը,
ճիշդ գերեզմանատունը հասնելէն վերջ:

— Օ՛րս պապամ ... սա նայէ, աս ամէ-
նուն լացը մեր օրին եկաւ զահէր, բարաթ-
եայի պէս եկէր լեցուէր են ... կըսէ տիկին
էպրոս, ճաթիկ ճաթիկ լացող տղեկին կըռ-
նակը չաթ չաթ ծեծելէն, որպէս զի ձայնը
կտրէ:

— Սուս էթ շունու քա՛ ... պէյնըս սու-
լանմիշ եղաւ ... կը ձայնէ ամուսինը ...

— Երկու հատ տահա խմէ քի ծանը չառ-
նես, ի՞նչ ընեմ լախըտը կը հասկնայ կոր
քի բիճը ...

— Տուտո՛ւ, տուտո՛ւ, Շնորհիկենք ալ
հոս են ...

— Ան թառափ մի նայիր քա, հիմաճուկ
կուգան գիֆթ սախըզ կը փակչին, վախիթ
չունիմ մտիկ ընելու, առջինիդ նայեցէք պիր
պաշ գալեցէք ... ինծի նայէ Արիսողոմ
աղա՛, ողորմած հոգին ո՞ր թառափ թաղե-
ցիք ...

— Պէն մէզառճը՛մըյըմ քա, չօգ չէյ ի՞նչ
գիտնամ, արգել օր մը պերինք սուվար տի-
պին թաղեցինք ամա՛, ո՞ր թառափը ըլլալը
չիյտեմ կոր ...

— Քա քեզի չըսի՛ քի աղապային քովը
տարէք տէյի ...

— Վրան մառքա չիգար, տէրպապան ուր
դրաւ նէ դրաւ, հէլպէթ ան գիտէր, տուր

պագալըմ, հէլպէթ պուրտա տրը, սօռարըզ...

— Կայնէ նայիմ, ես հիմա կը պէճէրեմ,
Ուսկո՛ւկ, դուն սա չօճուխը պոնէ, քանի
թվկայ նէ տիպին շաքալախը տուր, ես սանկ
երկնամ, ըսելով՝ տիկին էպրոս չորս դին
նայելէն կը յառաջանայ: Նոյն պահուն գե-
րեզմանափորը ձեռքը բահ բրիլ դէմը կելլայ,

— Ինծի կուգայ քի հրամանքդ մէզառ-
ճի ես ...

— Ի՞նչ է ան, ո՞ր թառափն էք նէ ըսէ
տէ չըբըն իչի փորեմ ... կըսէ մարդուկը,
ասոր անոր տուած օղիէն աչքերը կաս կար-
միր:

— Ձէ ճանըմ, փորելիք պան չիգայ, ո-
ղորմած հոգին կը բնտուեմ կոր ...

— Հոս կէս միլեօն ողորմած հոգի կայ,
ո՞րն է քուկդ, ի՞նչ գիտնամ ...

— Քա աման գիտնալու ես, էրկան Աւե-
տիս կսէին, նալպուր ...

— Էհ, կայնէ արչընը առնեմ տէ ո՞ր մէ-
զառը պօյլու է նէ գտնամ, կըսէ մարդուկը
հեգնական ժպիտով մը:

— Ամա՛ն դուն ալ, աչկերդ լէօպէթճիի
ֆէնէն է դառճէր, ես որի հետ կը խօրա-
թեմ կոր ...

— Ըռախի ունիս ըռախը, ինծի խառէխ
մը տուր, չէքի մէզառը ցուցնել, պատան-
քովը դուրս կը քաշեմ կէօրիւշտիւրմիւշ կը-
նեմ քեզի, հայտէ նայիմ, սէլէթ ո՛ւր է ...

— Մըրսի վրա՛դ ... կինոզ շուն, կայնէ
եւ Տէրպապան գտնամ տէ անոր հարցունեմ,
ըսելով՝ երբ կը յառաջանար, գերեզմանա-
փորը ետեւէն կը պոռայ ...

— Քա՛, Տէրպապան ինէ էվէլ խմած է,
ասանկ օրի այըխը ո՛ւր պիտի գտնաս քի...
ըսելով՝ գործին կերթայ, մինչ տիկին էպրոս,
քահանայի մը մօտենալով,

— Ծառքդ պագնեմ տէրտէր:

— Աստուած օրհնէ՛, աղախին Տեա՛ռն...

— Համմէ՛ ... կըսէ տիկինը, տէրպապա-
յին աչքերուն չի հաւնելով, եռմուռճախս
խմէք, աս ալ ծարերը թոցուցէր է ...

— Ի՞նչ է ան, մեռելի վրայ պիտի եր-
թանք ...

— Հա՛, Հայր մեր մը պիտի կարդալ տամ
ամա՛, մէզառը խայիպ նէ, ամապ գիտե՛ս,
ուր է պառկէր նէ հարըս ...

— Ո՞վ կըսուի օրհնած, ի՞նչ գիտնամ, հոս պառկողները ամէնքը մէկ եղած են հողին տակը, վրան քար մար բան մը կա՛յ...

— Ի՞նչ գիտնամ, պիտի դնել տայի ամա՛, ըսին քի քարերը կը կողնան պատ կը չինեն կոր տէյի նէ՛ փարայիս չի խմըչեցի ...

— Պարապ խօսք, անունը ի՞նչ էր ողորմած հոգիին ...

— Էրկան Աւետիս կըսէին, չըմանցունեմ քու պոյէդ քիչ մը չէքէրէկ ...

— Հեռու վրայէս, նէ իսէ, գիտես քի ատանկ մեռելի մը թաղման ես ալ գտնուեցայ, հետս եկուր նայի՛մ ...

— Կայնէ Տէրպապա, մերիններուն ալ ըսեմ տէ սէլէն առնեն հետ գան, չիւնքիւ վրան կարգալէդ ետքը հոգուն հէլվա եմ կոխեր, պիտի բաժնեմ ...

— Օրհնած, ատ հէլվան ճերմակ ճուրսը չերթար ...

— Իմ խելքս ո՞վ ունի քի, ես գիտցայ քի ատանկ պիտի ըլլայ տէյի տէ, տունէն հետ առի, էրիկ օլաճախք խառապաֆօռիին մէջը շիշէն տիպ ըրաւ:

— Հա՛ ... էյ տեսա՞ր մի պանը ... նէ իսէ, գալեցէք նայի՛մ ըսելով՝ Տէրպապան շիտակ կը տանի հողակոյտի մը մօտ (ըստ բաղդին անշուշտ) մինչ տիկին էպրոս իրենները կը կանչէ և բոլորը մէկ կը շարուին:

— Աս ըլլալու չէ տէրպապաս, աս մէղաւը էրկան չէ՞ նէ ... ողորմած հոգիին պոյը օլտուխճա էրկան էր ...

— Հա ամա՛ օրհնած, հողը կը քաշէ տէ կը կարճնայ, եա՛ ... ըսելով՝ փակեղը կը հանէ և կսկսի Հայր մեր որ յերկինս ես, Սուրբ ... եւլն:

Երբ քահանան իր աղօթքը կ'աւարտէ,

— Էյ հայտէ նայի՛մ, մեռելոցին ըռախի կը խման, թէք մը տուէք նայի՛մ օրհնածներ, ըսելով՝ հոն խոտերուն վրայ կը փռուի:

— Երկու աչկդ քէօռնայ, սանճի մը ընենք նէ տամլան չէ ձգէր քա, հէմէն հէմէն գիֆթ խմուս տէ արուններ փխսէս ... կըսէ տիկինը ամուսնոյն:

Նոյն պահուն ուրիշ տիկին մը տէրպապային մօտենալով,

— Գուզում տէրպապաս, սա հինգնոցը

առ տէ ել եկուր, գաւկիս վրան պիտի կարգացունել տամ ...

— Աղեկ ամա նէֆէս առնենք օրհնած, ան չէ ամա, քու շիշէդ լեցուն է, չէնէ մի գլխաւորդ ան ալ տիպ ըրաւ ...

— Հապա, խաչահանգիտի համար, վախցայ քի հոստեղունքը թէմիդ ճուր չի գըտնուի տէյի առի եկայ ...

— Չէ ճանըմ ան ձգէ, ճերմակ ճուր, տիւզ տիւզ ...

— Աս ի՞նչ խօրաթայ է տէրպապա, ես մեռելս լալու եկայ սուոր սըտեղը ...

— Իշտէ կսկիծդ մէյմը մէյմը տահա կըլլայ, հէլէ օմուրճային տիւզը ըլլալու ըլլայ նէ կա՛յ եա՛ օրհնած, արցունքի սէլ կը հանէք, անխըտարի թէէսիր ունի:

— Աման տէրտէր, քէֆդ տեղն է դահէր, ան չիպիտի ըսեմ, միւր ողորմածհոգին կարճը պոյլու էր, հատտա՛, կարճուկ Աւետիս կըսէին, կը նայի՛մ կոր քի ցուցուցած մէղաունին պոյլու պոյլունա պան մըն է ...

— Քա վո՛ււււււ, անանկ է նէ եաղլը կարգացունել տուեր եմ քուրուկ ... վա՛խ վա՛խ վա՛խ, իշտէ կարճուկ Աւետիսին գերեզմանը աս է՛ տէ, էրկան Աւետիսին ալ քու ըսածդ պիտի ըլլայ տեսար հիմա եղածը ... կըսէ տիկին էպրոս թուքերը ցատկցնելէն:

— Էյ ճանըմ օւթապոյ Աւետիս մըն ալ գտէք տէ երէքը մէկ լմնցունենք, եղաւ ըլլալիքը, աս տիօր իրինկուն պոյ պոյ Աւետիսները պիտի օրհնենք ըսելով՝ ոտքի կելլայ տէրպապան ու սըվըը կը դնէ:

— Էյ խաչո՛ր քիթէս բերնէս եկաւ, քա ի՞նչ տեղը կար քի էլին մեռելը կարգացունէի ... բիւթին դուն ես սէպէպը, կըսէ ամուսնոյն որ նոյն ատեն խմած օղիէն թմրած օձերու պէս կեցած տեղը կը սահմուկէր:

— Նէ տիր քա՛ ... ի՞նչ է, սէլէն պաց տէ կերակուրնիս ուտենք ալթըխ, հէրիքէքի դուն պարտդը ըրիր կարգացուցիր, պառկողն ալ Աւետիս չէ՛ եղեր մի ... երկան ըլլայ կարճ ըլլայ, անդիի աշխարհը մըղիւռայ չիգայ ... կը պատասխանէ Աբիսողոմ աղան:

— Անանկ է եա՛, քեզի ալ անխտար եալվար եղայ քի վրան քար մը տիր տէյի, կը կարդայինք կը կանայինք հիւ՛ օր չէնէ ...

— Հէրիֆը անձախ ըռահաթը գտեր է, ելլալու միտք չունի՝ քի վրան քար դնեմ...

— Էյ աման Արիսողոմ աղա՛... վախ՛ նամ շատ փախաւ, տէ քալեցէք նայիմ, բոթընները ժողվեցէք, գէրէ զիհնս բէք տա՛ զըլմիշ եղաւ...

— Դա տուտո՛ւ, սանկ նայէ, լաթէոնան գրէր բօլքա կը դառնան կոր, մէյմը սա թա՛ռաֆը նայէ...

— Որթնոտեր են վոթկածները, կէօյամ քի մեռելոցի են եկէր հա՛...

— Աման տուտուս, անոնց մօտերը նըստինք քի սէյր ընենք՝ կըսէ օրիորդը երկու ձեռքովը բիւրիւզ մազերը վեր առնելով:

— Եղաւ ըլլալիք, պարէ հօրըս նիյէթին կոխած հէլվայէս մէյմէկ քիշ տա աղքատներուն տամ տէ անանկ երթանք կըսէ ու տիկին էպրոս թէնծիթէին կափարիչը բանալով մէկ երկու աղքատի թգալ թգալ կը բաժնէ կարծուկ Աւետիսին գերեզմանին վրայ, իբրէր կան Աւետիսինը:

* * *

Արեւը տակաւ կը բարձրանայ, Տէրպապաները աղօթքէն փրփրած՝ ասոր անոր սեղանակից կըլլան, անդին օղիին աղղկեցուլ թենէն մէկ քանի կեղծ ուխտաւորներ ձայնական անձոռնի բացականչութիւններ կարձակեն, հոն լաթէոնան կը ճռնչէ, ու մէկ քանի զոյգեր կը պարեն, և ո՛վ զարմանք, մէկուն աչքը չարցունքոտի, մէկը իր մեռելը չի լար, ընդհանուր զբօսավայր մը կարծես, կերուխումի, վայելքի, հրճուանքի և բոլորովին հեռու օրէնքէ, կրօնքէ և որ աւելին է՝ ցաւէ ու կսկիծէ:

Այսպէս կը շարունակուի մինչեւ երեկոյ, երբ զբօսանքէ յափրացած ընտանիքներ քուլ՝ չերու պէս թուլցած պարտասած կը դառնան կայարան իրենց արուարձանները ցրուելու համար:

— Օ՛խ... աղէկ օր եալահ ըրինք, տեսա՛ր, ի՛նչ աղուոր էյլէնմիշ եղա՛նք... կըսէ մազերը ճերմկած կին մը:

— Զեզի պան մը ըսե՛մ, սա պալըխլըին բանայիրն ալ պաշխայ է պէ, շատ տեղ մեռելոց կըլլայ ամա սա մէղաուլըխին էյլէնճէն մէղայ քի ուրիշ տեղ մը ըլլայ, խօսք կառնէ ուրիշ մը վակօնին մէջ:

— Օրիորդ, եթէ խօստու՛դ չի յարգես, գիտցիր որ մահացու մեղքը կը մտնաս, թէև այսօր առաջին անգամը ըլլալով տեսուեցանք, բայց կարծեմ թէ մշտնջենական կապը մեր երկուքին գլուխը իրար պիտի զօդէ... կը յարէ զիւպպ մը, որ ճերմակ թաշկինակը համայիլ՝ վիզը դրած էր և 70նոց պատրաստ սիկառ կը ծխէր, լուսթռին սկառքիններով...

— Աս սօնն է իշտէ հետ պերելս, եու՛մ մուռճախին պերանը երթաք հէմէն, չի ձգեցիք քի չորս զին սէյր ընէի, բիճեր ձեզի, մէյ մըն ալ կը տեսնաք դուք, կըսէ մայր մը իր չորս դաւակներուն, որոնք կաս կապուտ կտրած էին ցատկելէն խաղալէն արեւին տակ:

— Պէ ախպար, պէօյլէ եէրլէրտէ պիրազ ֆաղլա ալըրլար ճերմակ ճուրը, թամ քէֆլի վագրթտա չիշէնին մառքասը կէօզիւքտիւ... կընդմիջէ տանկուտի մը, որ խմելէն աչքերուն մէջ արիւն քալած էր:

Մինչ անդին, վակօնին անկիւնը՝ Աստուծոյ գործունեայ պաշտօնեան, փակեղը քովը դրած, չորսական չորսական քառորդները մէջի գրպանը կը զետեղէր ուսերը վեր առնելով և խամպուռլանմիշ ըլլալով, և կարծեմ թէ բուն Պայրգլը բանայիրին Տէրպապային վիճակած էր:

Երանելիճե՛ր, մէկն ալ ելլար ի սրտէ հառաչ մը արձակելով ըսէր ինքնիքեն՝ Աստուած ողորմի մեռելներնուս հոգո՛ւն...

ԼԻԼԱ

Մ Ա Հ

ՄԵՍՐՈՊ ԷՖԷՆՏԻ ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆԻ

Հօրեղբայր ծանօթ հրապարակագիր եւ «ԾԱՂԻԿ» մանկանց Հանդեսին խմբագրապետ Յակոբ ԷՖ. Տէր-Յակոբեանի.

Զորեգաբքի ժամը 5ին Գում-գաբուի Մայր Եկեղեցւոյն մէջ մեծ հանդիսաւորութեամբ կատարուեցաւ յուղարկաւորութեան փառ հանդեսը, Եկեղեցականաց եւ աշխարհականաց ընտելալ բազմութեան մը ներկայութեան:

Խմբագրութիւնս իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ այս առթիւ՝ Այրի Տիկնոջը, ինչպէս նաեւ իր ազնիւ Պատճառակցին՝ Յակոբ ԷՖ. Տէր-Յակոբեանի, իրենց ընտանիքին վիճակած այս դառն կորուսեան առթիւ:

ՄԱՐԿՏՈՒԿՆԵՐ

ԳՈՒՄ-ԳԱՐՈՒԻ

ՌԵՍԹԵԳ ԵՐԱ

Գում-գարուն ալ իր Ռէսթը ունի:

Ընթերցատունի պէս բան մը, ուր մարդ ուզածին չափ կրնայ կարդալ առանց բնիօն մը վճարելու՝ Ս. Գիրք եւ «Աւետարան», «Մանգոմէ» եւ այլն:

Հետս կուգա՞ք, Ռէսթէն ներս մտնելով սլքտումներ ընկնք:

* * *

ԳԵՈՐԳ ԱՂԱՆ

Ժամը տասներկու քին մօտ է ու լամբարը կը վառուի: Ծերուկ մը որ մինչեւ այն ատեն պատին քովօքը կը կարդար, կելլայ ու լամբարին տակը զետեղուած մեծ սեղանին մօտը՝ իր սովորական տեղը կը նստի:

Կարծէ որ խօսիմ այս բարի ծերուկին վրայ:

Գրեթէ հոն տեղի միւթէվէլին է Գէորգ աղան:

Միշտ թերթ ունի ձեռքը՝ որ պահուն որ տեսնաս զայն, ու սանկ, քիչ մը մէկ ուսը վեր առած, կը կարդայ ու կը կարդայ քիչ մը բարձր ձայնով՝ թերթին չորս կողմը, ու շըն ուրուշը կեդրոնացնելով եկեղեցակւն լուրերուն, որովհետեւ ատոնք են աւելի, որ կը շահագրգռեն զինքը:

Մեր եկեղեցականներուն ամէնքը կը ճանչնայ եւ ամէնուն վրայ ալ տեղեկութիւններ ունի, գիտէ թէ սա ինչ առաջնորդը քանի՞ անգամ թեմ փոխած է, ու քանի՞ անգամ Պօլիս եկած, եւ այս «գալ» երը անձնական անհանգստութեան համար են, չէնէ մի՞... պիւտճէ անհանգստացնելուն... եւ կամ այն ինչ առաջնորդը Պօլիս եկած է զտեալ օդ կլլելու համար՝ չէնէ մի՞... պիւտճէ մը կլլելուն ու մարսելուն... առանց քիչ մը քառապոնաթ առնելու...:

Թաղային խնդիրներն ալ գոց գիտէ... գիտցած Շարականներուն պէս. գիտէ թէ՛ սա ինչ թաղականը քանի՞ քուէով ընտրուած է, թէ ինչու Մայր եկեղեցիի կամարներուն տակ չկրկնուեցաւ Եռաձայն Արեւագալը:

Մեր քահանաներուն շատին ձեռնադրութիւնը ու անդրանիկ Պատարագնին տեսած է:

Ս. Պատրիարք Հայրը ո՛ւր որ Պատարագէ հոն է Գէորգ աղան, ուր որ քարոզէ՝ նորէն հոն է, Բրօֆ. Ճէճիզեան պիտի քարոզէ Պայպլ-Հաւա՝ կէս ժամ առաջ հասած է արդէն մեր Գէորգ աղան. Մսթր. Ալէն պիտի խօսի՝ ունկնդիրներուն մէջ պիտի տեսնես այս բարի ծերուկը: Եռաձայն կայ Զիւնկիր՝ հո՛ն է, հո՛ն է նաեւ երբ եւ յառաջ կայ Եկմալեան: Յունաց եկեղեցին Թաղումը պիտի պտտցնէ՝ հոն է, հո՛ն է երբ Թաղերու վարժարանները հանդէս ունին:

Իր սովորական տեղը ունի ան Մայր եկեղեցիին մէջ, եւ եթէ եկեղեցին պիտտակի պէս լեցուն բազմոյթ կայ ու ասեղ մը չը կրնար անցնիլ, Գէորգ աղան կանցնի եւ իր սովորական տեղն է՝ բայց քրտինքներու մէջ:

Ուղիղ մարդ է, եւ ուղիղ ըլլալուն ապացոյցը... գրպանի ժամացոյցին ուղիղ երթալն է...:

* * *

ՄԵԾԱՊԱՏԻԻ
ՏԱՇՏ

Է՛յ, դառցանք դառցանք ու հասանք սա՛ համբաւաւոր Տաշտին խնդիրին... Համմէ՛

պիտի ըսեն ասոնք կարգացողները, գիտնալով որ «տաշտ» քեֆնէ ըսել է, ու խելքերնին չպիտի կրնան հասցնել թէ՛ ինչո՞ւ հոսա տաշտ մը առաջ կը քշենք... ծով նաւակ իջեցնելու պէս:

Նախ սա ըսեմ թէ՛ «տաշտ»ին խնդիրը իրա՛ւ չէր արժեք որ գրուեր, բայց նկատելով թէ՛ բաւական հետաքրքրուողներ ունեցած է իր շուրջը, ասոր համար մեր ճիտին պարտքը համարեցինք, խնդրոյ առարկայ եղող «Տաշտ»ը գրկած մեր ընթերցողներուն երեւալ...:

ՏԱԾՏ

(Թ Է Ք Ն Է)

Ահա այս բառն է, որ օր մը, երեք տարի առաջ ծնած է Ռէսթին սեղաններուն վերայ, և ատեն մըն ալ թմրութեան ենթակուելէ ետքը, անցածները, Չատկէն քանի մը շաբաթներ առաջ... յարութիւն առած է՝ նորէն Ռէսթին սեղաններուն վերայ:

Ա՛ս տաշան է որ օրին մէկը «Մանգու-մէ»ի սանդուղիներէն վեր թաւալած է ու գացած Բասիմը խնդացուցած:

Բայց ի՞նչ է խնդիրը:

Մարդուն մէկը, Մատթիա Գարագաշ-եանի Օլէնտօրֆին մէջը սա տողին կը հանդիպի:

Sacs մը (ֆիլան) քիչ կառնէ՞ք...

Ու ինք ալ մէկու մը կըսէ:

— Տաշտ մը թէյ կառնէ՞ք...

— Համմէ, կը պատասխանէ խօսակիցը:

— Տաշտ մը, տաշտ մը թէյ, եւ կամ թէյ տաշտ մը թէյ չէ՞ք առներ տաշտ մը սուրճ առէք...

— Ի՞նչ կըսես կոր պէ՛, քեֆնէ մը չա՛յ...

— Տաշտ Զիլեան ըսել է, հէ՛օյ...

Ա՛ս երեք տարի առաջ կրկնայ կոր ու անկէ ի վեր միշտ կը կրկնուի տաշտին խընդիրը մէջտեղ հանողին:

— Տաշտ մը թէյ կառնէ՞ք:

Բայց տաշտայոյզը անցածներ երեւան բերած է թէ՛ Նարեկացին Նարեկի Լ. Գըլ-խուն մէջ ուրիշ նշանակութեամբ գործածած ու կարեւոր բառարան մըն ալ տաշտին տարբեր տարբեր նշանակութիւնները ցուցուցած: (Երբեմն, տաշտ կըսեն եղեր, ապակիէ եւ յախճապակիէ ամաններու, որոնցմէ ջուր ու գինի կը խմեն եղեր, եւ որուն ռամկօրէնն է եղեր քաս, քեսսե):

Այն ատեն, տաշտայոյզը իր ընդդիմախօսներուն դէմը կեղւայ ու:

— Տաշտ ի՞նչ ըսել է:

— Թէքնէ:

— Բայց Նարեկացին նայեցէք ինչ է ըսեր:

«Տաշտը կրեցեալք ի ծայրս մատանց, մին գինի միւսն լեզի»: Ընդդիմախօսները չեն ուղեր հասկնալ ու կաւելցնեն:

— Տաշտ մը սուրճ կառնէ՞ք...:

Եւ այսօր, իրաւ թէ ՏԱՇՏ Ը զուխներու մէջ իր ուրիշ նշանակութիւններ ունենալը դրոշմած է, բայց Ռէսթին չորս պատերուն մէջ դեռ կարճագանգէ:

— Տաշտ մը սուրճ կառնէ՞ք: (Հո՞ս ես Ներսէս, չարածճիին մե՛նծը...):

×

Ռեսթին մէջ սլֆումներուս ամբողջացու-մը գալ շաբթու:

Անմեռուկ



ՇՆՈՐՀԱՌՈՐՈՒՄ

ՎՍԵՍԱՇՈՒՔ ԱՐԱՄ ԱՏԻԼ ՊԷՅԻ

ԻՒԼԱԻ Աստիանի բարձրացումը, որ, Երկրին իմաստուն ՎԵՀԱՊԵՏԻՆ Կայսերական կառավարութեան կողմանէ քաջալերում մ'ու վարձատրում մ'է, ի պատիւ Պետութեան ու Ազգին օգտակար ծառայութիւններ մատուցանողներուն, որոնցմէ մին է եւ Վսեմաշուք Արամ Ասիլ Պէյ, Թարգման Կայսերական Պալատան, եւ փեսայ Ազն. Երեւում Էֆենտի Փափագեանի, կ'ենօրհանուրուի՝ նաեւ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ կողմանէ, հանդերձ այն ամէն համակրական ու պատուասիրական զգացումներով, որոց ընդհանրական արձագանգն ու բարգիւնն ըլլալու հրապարակագրական պատշոնն ու պարտն ունին Կայսերական ամէն կարգի Շնորհներն Հանրութեան Հռչակողը, եւ այդ հռչակումով հասկցնելու համար քե՛ Կայսերական Հայրախնամ Կառավարութիւնը զմահատող ու պատուող է Պետութեան քե Հանրութեան իրենց՝ անժխտելի տաղանդովն ու արժանիքովն օրակար հանդիսացողները, որոց պատշոնական ու արժանաւոր դասակարգին մէջ, առաջին տեղին գրաւողներէն մին է եւ Վսեմաշուք Արամ Ասիլ Պէյ՝ իր անձնական տաղանդովն ու արժանիքով:

Կ'մաղթեմք որ Կայսերական Կառավարութեան Աստիանի բարձրացման այս նոր Շնորհն ըլլա՛յ Պատշոնական Նուիրապետութեան կարգին մէջ, ա՛յլ աւելի բարձրաստի-հան Տիտղոսներու հասցնելիք ոսկեղէն նոր կամուրջ մ'ու ոսկեղէն նոր սանդուղի մըն՝ Վսեմաշուք Արամ Ասիլ Պէյի համար: Մեր շնորհաւորումին հետ եւ մեր խնդակցումը:

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲԵՐԱ. — Մաքսիմ Գորկին էս-
եան լապտերով՝ իր կազմելիք քառաձայնի
խումբին ձայնանուշ (°) անդամներ փնտռե-
լու վրայ է։ Իմացածնուս նայելով՝ յիշեալը
Գառն-գիւղ Գուրպաղը Տէրէ երթալով գոր-
տերու կրկուակն ալ փորձեր է։

ՆՈՅՆ. — Էսաեան վարժարանի փողոցէն
անցնողներ խժաձայն օրեռաի մը ունկնդիր
կըլլան, շերմապէս բամպակ կառաջարկենք
ականջներու։

ՆՈՅՆ. — Նոյն վարժարանի վարժապետ-
ներէն մին, որ պասօի դեր ունի զազատ-
կին կազմելի խումբին մէջ, հետաքրքիրնե-
րու մուտքը սրահ արգիլելու համար դուռը
կը հսկէ, ֆոնքը-տաններ ընելով։

ՄԱԳՐԻ-ԳԻՒՂ. — Վերջապէս որոշուե-
ցաւ մասնաւոր պատարագով մը բանադրել
ամէն անոնք՝ որոնք յանդգնած էին փոխ-Ա-
ւագերեցին կարգ մը չեմ գիտեր ինչերը հը-
րապարակել (տե՛ս Մանգումե «Անօրինակ
խօստովանանք մը»)։ (Աման Տէրպապա, զա-
թը ես նէվազիլ եմ, ինծի համար միտքէդ
գէշ մ'անցունէր Ծ. Լ.)։

ՍԿԻՒՏԱՐ. — Անցեալ կիրակի երկու
հասուկ օրիորդներ կէս օրէն մինչեւ իրինկուն
խոտերուն վրայ նստելով ամուսնութեան հո-
գեբանութիւն ընելնուն առթիւ պաղ առած
ըլլանուն՝ կիմանանք թէ հիմակ ալ տաք
թուղլայի վրայ կը նստին կոր... (Քէօռ
բաղդերնուդ վրայ նստիք աւելի աղէկ կընէք
մատմազէններ. Ծ. Խ.)։

ՆՈՅՆ. — Պէյլէրի Պարտէզը բացուեցաւ։
Անցեալ իրինկուն երիտասարդ մը այնքան
հաւնեցաւ օրիորդի մը մառուլ ուտուածքին,
որ զրոյցի մը նայելով՝ այս կիրակի խօսք
կապ պիտի տանին եղեր։

ԳԱՏԸ-ԳԻՒՂ. — Հոս ամէն բան նոր
պէտք է ըլլայ։ Տեղացի օրիորդներէն ոմանք
մտադիր են Ֆուք-Պոլ Բլրայ մը կազմել, և
ասոր համար մասնաւոր քօթիւմներ պիտի
պատրաստուին։ (Բանթալօնուն կապերը ա-
մուր ըլլան որպէս զի... ինչ գիտնամ... Ծ. Խ.)։

Արսոնաշէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍԵՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի հասէսի քիւ 52.

ՄԵԾ ՆՈՒԱԳԱՅԱՆԴԵՍ

Ի ՆՊԱՍՏ

Ս. ՓՐԿՉԻ ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻՆ

ԲԵՐԱ ԲԸԹԻ ՇԱՆԻ ԹԱՏՐՈՆԸ

Կիրակի, 27 Ապրիլ 1908, ժամը 7 1/2-ին (Ը.Թ.)

Ինչպէս ամէն տարի՝ նոյնպէս եւ
այս տարի Պաս. Հոգաբարձութիւնը
կարող Մասնախմբի մը օժանդակու-
թեամբ, նման չի տեսնուած կարգադ-
րութեամբ մը կազմակերպած է
սոյն Նուագահանդէսը, որուն գովեստը
ընել աւելորդ պիտի ըլլայ, երբ մէջ
բերենք այն հազուագիւտ ամաթէո-
ներու մասնակցութիւնը եւ հասրեցիր
թոօկոսալի մը գործադրութիւնը։

Սոյն գեղեցիկ ցերեկային փայլը
անգամ մը եւս աւելցնելու համար,
բանիբուն մասնախումբը յաշկապէս
հրաւիրած է, մեր համայնքին եւ քէ
օտարագգի է՛ն յաջող վարպետները,
ինչպէս՝ Օր. Շէօհլէեան, Տիկին Ա.
Ֆլէռի, Օր. Միքայէլեան, Օր. Հ. եւ Ա.
Էփէրեան, Պր. Սթանօ, Պր. Ա. Կաեան,
ինչպէս նաեւ Կեդրոնականի ամբողջ
խմբերը։

Նուագահանդէսին ամբողջ տեսողութեա-
նը, դաւնակի ընկերակցութիւնը պիտի վա-
րէ՝ ծանօթ երգահան Յ. Սիմանեան է։

Մասնախումբը՝ բոլոր նպաստողներուն
սիրուն եւ հանելի ժամանց մը առթելու հա-
մար կարելի ի գործ դրած է, պէտք է ըսել,
շարք մը տարբեր նիւմուսներով՝ միշտ վառ
պահելու հետաքրքրութիւնը ամէն անոց՝ որոնք
միւլգիքն կախորժին եւ լա՛ւ միւլգիքն։

Յուսալի՝ է որ, այսօր գոհողութիւններու
փոխան, ժողովուրդը պիտի ուզէ լիովին օգ-
նել այս մեծ հաստատութեան հազարաւոր
պատասխաններուն, որուն բացառիկ ծախ-
քեր տարեկան Նուագահանդէսն է որ կը հա-
ւասարակուէ մասամբ։

Արդ, փութացէ՛ք ի Բըթի Շան

Ուր կայ նուագ, concert et chants.

ՄԵԾ Գ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՆՈՅՑՑԶԵՆՔՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Հանամ, Թօփաչեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկունութեամբ և գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
դիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց թելընկերու
և տղայոց չիք և դիմացկուն ֆաբրիկ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի և ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զըշ է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—31



ԱՌԻԹԵՆ

ՕԳՏՈՒԵՑԷՐ

ՓՈՒԹԱՑԷՐ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒՅԱՆ

Յ. ԻՍՄԱԳՈՒԼԵԱՆԻ

[Ճեղք պէյ խանին
սակ

Թէ յի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սիյանէ,
Ջինասանէ, Հնդկասանէ, Ճապէ եւ Ճա-
րոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովը ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ և փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ՃՈՒՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համար տարեկան բաժնեգին	50 դր.	Վեցամսեայ	25 դր.
Գաւառաց համար	»	»	27 »
Արսասանման	»	»	6 Ֆր.

Կ Ա Ն Ի Ի Կ

ՀԱՍՑԷ՝

ՊԱՋԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ, Պապը-Ալի հասսկի Աւասուրեան տպարան քիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան
թէ միշտ նոր բաժանորդներու անունին և հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Դրամները պէտք է ղրկուին կամ Օսմ. Մանտարութով և կամ բաւթայի փութով 20 հաւը
20 ղրուշի հաշուով:

Լ Ո Յ Ս

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ

ԳՐԱԿԱՆ, ԽՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ ԵՌԱՀԱՆՆԷՍ ԷՖ. ԳԱՅՍԷՐԵԱՆ

ԽՄԲԱԴՐԱՊԵՏ ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

«ԼՈՅՍ»՝ օրուան Գրականութեան օղկա-
նը, իր սովորական ճոխ նիւթերէն եւ ինք-
նատիպ լուսանկարներէն զատ կը հրատարա-
կէ նաեւ բացառիկ թիւեր՝ ալ աւելի խընա-
մոտ ու ճոխացեալ, որոնցմէ կրնան օգտուիլ
անո՛նք՝ որոնք կը բաժանորդագրուին:

Պօլիսի համար 50 Ղրչ.

Գաւառի համար 54 »

Արտասահման՝ 12 փռանք.

ՀԱՍՑԷ՝ Պապը-Այի ճատտէսի Թիւ 38,
Մանգումէ օրաթերթին Տէր եւ Տնօրէն Յով-
հաննէս Ֆէրիտ Էֆ. Գայսէրեան.

ԳԱՌՆԻԿ ՔԷՇԻՃԵԱՆ

ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ. Պոլիս Հանօ-Բուլօ խան իբր. 2

Նախ փորձառունները, յետոյ խաբ-
ուողները միայն գիտեն էթ ո՛րչափ
դժուար է գտնել ու գնել ապրանք-
ներ՝ որոնք թէ տոկուն ըլլան՝ թէ ճա-
շակաւոր եւ թէ . . . աժան:

Գառնիկ Քէշիճեան վաճառատներս
թօհաֆիէի էն առաջնակարգ Եւրոպա-
կան գործարաններէն բերել տուած է
տեսակ տեսակ կանանց եւ արանց յա-
տուկ Ֆանէլաներ, գուլպաներ, քաւիկնակ-
ներ, ձեռնոցներ, փողկապներ, բրդեղեցներ,
Ֆիլիփսու եւ խիստ ճաշակաւոր ներգնաւայիկ-
ներ, գլխու շարքեր, քաւ ֆոսէներ ևլն. ևլն.

Ջերմապէս կը յանձարենք անգամ
մը այցելել այդ վաճառատունը, ուրկէ
անպատճառ գոհ մնացողներ միշտ հոն
գիմեւով պիտի հաստատեն թէ՛ զինե-
րու աժանութեան, տեսակի ազնուութեան եւ
ապրանաց տոկունութեան. երեք առաւել-
լութիւնները ուրիշ ո՛ր է տեղ կարելի
չէ գտնել: